Թեմատիկ պլանավորում

Հայոց լեզու

Տարեկան 68 ժամ

Շաբաթական 2 ժամ

Հեղինակներ՝ Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, 2015

| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| --- | --- | --- |
| **Գրական լեզու և բարբառ** | • Ընկալելի դարձնել գրական լեզվի և բարբառների տարբերությունը:<br>• Ընդհանրական գծերով ներկայացնել աշխարհաբարի ձևավորման և զարգացման ընթացքը:<br>• Պատկերացում ձևավորել գրական հայերենի երկու ճյուղերի գործածության հատվածների մասին:<br>• Ներկայացնել | • Տարբերակել գրական լեզուն և բարբառը:<br><br>• Նշել աշխարհաբարի ծագման ժամանակաշրջանը:<br>• Հիշատակել աշխարհաբարի զարգացման գործում մեծ ավանդ ունեցած մեկ պարբերական և կրթօջախ:<br><br>• Ներկայացնել արևելահայերենի և արևմտահայերենի գործածության հատվածները:<br><br>• Տարբերակել արևելահայերեն և արևմտահայերեն հնչյունային խոսքը: |

| | | |
|---|---|---|
| | արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունային, բառապաշարային և քերականական մի քանի առանձնահատկություններ: | • Նշել արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունային, բառապաշարային և քերականական մի քանի տարբերություն: |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 11/1 | 3-5 | Գրական լեզու և բարբառ |
| 11/1 | 9-10 | Նոր գրական հայերեն՝ աշխարհաբար: Աշխարհաբարի զարգացման ընթացքը |
| 11/1 | 11-12 | Հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը |
| 11/1 | 12 - 14 | Արևմտահայերենի հնչյունական համակարգը: Արևմտահայերենի բառապաշարը |
| 11/1 | 15-16 | Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Ձևաբանություն** | • Հիշեցնել բառի սահմանումը և ամրապնդել դրա ընկալումը:<br>• Ծանոթացնել | • Տալ բառի սահմանումը:<br>• Առանձնացնել հիմնական և երկրորդական ձևույթները: |

| | | |
|---|---|---|
| | «ձևույթ» հասկացությանը և դրա տեսակներին:<br>• Ընկալելի դարձնել նախադասության մեջ բառի ձևափոխության նշանակությունը:<br>• Ամրապնդել խոսքի մասերի վերաբերյալ ունեցած պատկերացումը:<br>• Հիշեցնել «հոմանիշ» և «հոմանշային շարք» հասկացությունները:<br>• Ի ցույց դնել այն խոսքի մասերը, որոնք հատկապես հարուստ են հոմանշային շարքերով: | • Տարբերակել բառի ուղիղ և թեք ձևերը:<br>• Թվարկել հայերենի խոսքի մասերը:<br>• Առանձնացնել նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը:<br>• Բացատրել «հոմանիշ» հասկացությունը:<br>• Նշել տրված բառերի հոմանիշները:<br>• Առանձնացնել գոյականը, ածականը և մակբայը՝ որպես հոմանշային հարուստ շարքեր ունեցող խոսքի մասեր: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 20-21 | Բառային իմաստ և քերականական |

| | | |
|---|---|---|
| | | իմաստ: Ձևույթներ |
| 1 | 22-23 | Հայերենի խոսքի մասերի համակարգը |
| 1 | 25-27 | Գոյականի, ածականի և մակբայի հոմանշային շարքերը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Գոյական անուն** | • Ամրապնդել գոյականի վերաբերյալ ունեցած գիտելիքը:<br>• Հիշեցնել անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ գոյականները:<br>• Ամրապնդել գոյականի քերականական կարգերի վերաբերյալ ունեցած գիտելիքը: | • Տալ գոյականի սահմանումը:<br>• Առանձնացնել գոյականները տրված տեքստում:<br>• Տարբերակել անձնանիշ և իրանիշ, հատուկ և հասարակ գոյականները:<br>• Կազմել տրված գոյականների հոգնակի ձևերը:<br>• Թվարկել հայերենի հոլովները:<br>• Տրված նախադասության մեջ առանձնացնել անորոշ և որոշյալ առումներով դրված գոյականները: |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 1 | 28-32 | Գոյական անուն: Հատուկ և հասարակ գոյականներ |
| 1 | 36-37 | Գոյականի թիվը |
| 1 | 40-41 | Գոյականի առումները |
| 1 | 43-47 | Գոյականի հոլովները: Ուղղական հոլով |
| 1 | 48-50 | Սեռական հոլով |

| | | |
|---|---|---|
| 1 | 52-53 | Տրական հոլով |
| 1 | 55-56 | Հայցական հոլով |
| 1 | 58-60 | Բացառական հոլով |
| 1 | 62-64 | Գործիական հոլով |
| 1 | 65-66 | Ներգոյական հոլով |
| **Թեմա**<br>**Բայ** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | • Հիշեցնել բայի սահմանումը:<br>• Ընդգծել դեմքի քերականական կարգի դերը բայերի դասակարգման հարցում:<br>• Ամրապնդել դերբայների մասին ունեցած գիտելիքը:<br>• Ամրապնդել դեմքի և թվի քերականական կարգերի վերաբերյալ ունեցած գիտելիքը:<br>• Հիշեցնել բայի | • Տարբերակել բայը՝ իբրև խոսքի մաս:<br>• Առանձնացնել դիմավոր և անդեմ բայերը:<br>• Մտապահել հայերենի դերբայների քանակը:<br>• Թվարկել և տարբերակել հայերենի դերբայները:<br>• Նշել տրված բայի դեմքը և թիվը<br>• Նշել բայի եղանակներից առնվազն երկուսը:<br>Ճանաչել բայի եղանակների ժամանակաձևերը: |

| | | |
|---|---|---|
| | եղանակները:<br>• Նպաստել տարբեր ժամանակաձևե-րի ընկալմանը:<br>• Նպաստել գրագետ և կապակցված բանավոր և գրավոր խոսք կառուցելուն: | • Նախադասություններ կազմել՝ ըստ տրված պահանջի: |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 1 | 71 | Բայ: Դիմավոր և անդեմ բայեր |
| 1 | 73-74 | Դերբայներ: Անկախ դերբայներ: Անորոշ դերբայ |
| 1 | 77-80 | Համակատար և հարակատար դերբայներ |
| 1 | 83 | Ենթակայական դերբայ |
| 1 | 88 | Կախյալ դերբայներ կամ ձևաբայեր |
| 1 | 89 | Անկատար դերբայ (ձևաբայ) |
| 1 | 91 | Ապակատար դերբայ (ձևաբայ) |
| 1 | 93 | Վաղակատար դերբայ (ձևաբայեր) |
| 1 | 95 | Ժխտական դերբայ (ձևաբայ) |
| 1 | 99-100 | Խոնարհում: Բայի եղանակները: Բայի ժամանակները |
| 1 | 100-101 | Բայի դեմքը և թիվը |
| 1 | 102 | Դրական և ժխտական խոնարհում: |

| | | |
|---|---|---|
| | | Օժանդակ բայ |
| 1 | 105-106 | Սահմանական եղանակ: Անկատար ներկա: Անկատար անցյալ |
| 1 | 106 | Ապակատար ներկա: Ապակատար անցյալ |
| 1 | 106-107 | Վաղակատար ներկա: Վաղակատար անցյալ |
| 1 | 107 | Անցյալ կատարյալ |
| 1 | 113 | Հրամայական եղանակ |
| 1 | 116 | Ըղձական եղանակ |
| 1 | 118-119 | Ենթադրական (պայմանական) եղանակ |
| 1 | 120-121 | Հարկադրական եղանակ |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| **Շարահյուսություն** | • Հիշեցնել շարահյուսության մասին:<br>• Հնարավորինս պարզ օրինակներով ծանոթացնել շարահյուսական հոմանշությանը և դրա դրսևորումներին (բարդ բառ և բառակապակցություն, հոլովածն և | • Ընդհանուր գծերով ներկայացնել շարահուսության ուսումնասիրության առարկան:<br>• Ներկայացնել «շարահյուսական հոմանշություն» հասկացությունը:<br>• Շարահյուսական հոմանշության առնվազն մեկ դրսևորում մատնանշել: |

| | | |
|---|---|---|
| | կապական կառույց, դերբայական դարձված և երկրորդական նախադասություն, բարդ ստորադասական և պարզ նախադասություններ, ներգործական և կրավորական կառույցներ, մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք)։<br>• Դյուրին օրինակներով հիշեցնել դերբայական դարձվածի կետադրությունը։<br>• Պարզագույն կառույցների միջոցով ծանոթացնել բարդ նախադասության փոխակերպմանը | • Կետադրել դերբայական դարձված ունեցող պարզ նախադասություններ։<br>• Պարզագույն օրինակների միջոցով բարդ նախադասությունը փոխակերպել պարզի։<br>• Տարբերակել մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերը։<br>• Կետադրել ուղղակի խոսքի պարզագույն օրինակներ։<br>• Թվարկել նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության նպատակի։<br>• Կազմել նախադասություններ՝ ըստ տրված պահանջի։ |

| | | |
|---|---|---|
| | պարզի և հակառակը։<br>• Հիշեցնել մեջբերվող խոսքի տեսակները։<br>• Պարզագույն օրինակների միջոցով ամրապնդել ուղղակի խոսքի կետադրության վերաբերյալ ունեցած գիտելիքը։<br>• Հիշեցնել նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության նպատակի։<br>• Նպաստել խոսքի գրագիտության բարելավմանը։ | |
| **Ժամ** | **էջ** | **Դաս** |
| 1 | 130-131 | Շարահյուսություն։ Շարահյուսական հոմանիշներ |
| 1 | 33 | Բարդ բառ և բառակապակցություն |
| 1 | 135-136 | Հոլովաձև և կապական կառույց |
| 1 | 137-138 | Դերբայական դարձված և երկրորդական |

| | | |
|---|---|---|
| | | նախադասություն |
| 1 | 138-139 | Դերբայական դարձվածի կետադրությունը |
| 1 | 141-142 | Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը |
| 1 | 145 | Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման իմաստային - քերականական առանձնահատկությունները |
| 1 | 151-152 | Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք |
| 1 | 152-153 | Մեջբերվող ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի |
| 1 | 157-156 | Ուղղակի խոսքի կետադրությունը |
| 1 | 161-162 | Ներգործական և կրավորական կառույցներ. նրանց փոխակերպումը |
| 1 | 162-163 | Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության նպատակի, նրանց հնչերանգը և կետադրությունը: |
| **Թեմա**<br><br>**Կետադրություն** | **Նպատակ**<br>• Հիշեցնել կետադրության պարզ կանոնները:<br>• Ծանոթացնել կետադրական նշանների խմբերին: | **Վերջնարդյունքներ**<br>• Կետադրել պարզագույն օրինակներ՝ ըստ սովորած կանոնների:<br>• Թվարկել կետադրական նշանների խմբերը:<br>• Նախադասություններ կազմել և կետադրել՝ ըստ տրված |

| | | |
|---|---|---|
| | • Նպաստել խոսքի գրագիտության բարելավմանը: | պահանջների: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 166-167 | Կետադրություն |
| 1 | 168-171 | Տրոհության նշաններ |
| 1 | 174-175 | Առոգանության նշաններ |
| 1 | 177-178 | Բացահայտության նշաններ |
| **Թեմա** | **Նպատակներ** | **Վերջնարդյունքեր** |
| Ոճագիտություն | • Պատկերացում տալ ոճագիտության մասին:<br>• Ծանոթացնել գիտական ոճի իմաստային և բառապաշարային հիմնական առանձնահատկություններին: | • Բացատրել՝ ընդհանուր գծերով ինչ է ուսումնասիրում ոճագիտությունը:<br>• Ճանաչել գիտական ոճով գրված տեքստերը:<br>• Տերմինների օրինակներ բերել: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 1 | 184-186 | Ոճագիտություն: Գիտական ոճի առանձնահատկությունները |
| 1 | 186-187 | Գիտական ոճի բառապաշարը |
| 1 | 188 | Գիտական ոճի քերականական առանձնահատկությունները |

**Դաս 1. Գրական լեզու և բարբառներ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ եք հասկանում՝ գրական լեզու ասելով:
2. Քանի՞ ճյուղի է բաժանվում ժամանակակից հայոց լեզուն:
3. Շուրջ քանի՞ բարբառ ունի հայերենը:
4. Ըստ ձեզ՝ առած - ասացվածքները և թևավոր խոսքերը գրակա՞ն, թե՞ բարբառային ծագում ունեն:
5. Հայերենի ո՞ր բարբառը կամ բարբառներն են ձեզ ծանոթ:
6. Թվարկե՛ք բարբառային մի քանի բառ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գրական լեզվի սահմանումը:
2. Գրական լեզվի երկու տարբերակների անվանումները:
3. Հայերենի բարբառների մոտավոր թիվը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Հիշել** գրական լեզվի սահմանումը:

2.**Նշել** գրական հայերենի երկու տարբերակների անվանումները:

3.**Մտապահել** հայերենի բարբառների թիվը:

**Դաս 2. Նոր գրական հայերեն՝ աշխարհաբար: Աշխարհաբարի զարգացման ընթացքը:** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞ր դարից է հանդես գալիս աշխարհաբարը:

2.Ո՞ր պարբերականն է նպաստել աշխարհաբարի զարգացմանը;

3.Ո՞ր քաղաքում էր գտնվում Ներսիսյան դպրոցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Աշխարհաբարի հանդես գալու դարաշրջանը:

2. «Հյուսիսափայլ» պարբերականի անվանումը, դերն ու նշանակությունը աշխարհաբարի զարգացման գործում:

3.Ներսիսյան դպրոցի գտնվելու վայրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Նշել**՝ որ դարից է սկսվում աշխարհաբարի դարաշրջանը:

2.**Մտապահել** «Հյուսիսափայլ» պարբերականի անունը:

3. **Անվանել** այն քաղաքը, որտեղ գործում էր Ներսիսյան դպրոցը:

**Դաս 3. Հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը**

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Որո՞նք են արդի գրական հայերենի երկու ճյուղերը:

2.Որտե՞ղ են խոսում արևելահայերեն, որտե՞ղ՝ արևմտահայերեն:

3. Արևմտահայերեն մի քանի բառ նշե՛ք:

4. Արևմտահայերենով գրված ի՞նչ ստեղծագործություններ գիտեք:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հայերենի երկու ճյուղերի անվանումները:

2. Արևելահայերենի և արևմտահայերենի գործածության հատվածները:

3. Արևմտահայերեն մի քանի բառ:

4. Արևմտահայերենով գրված առնվազն մեկ ստեղծագործության վերնագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Հիշել** արդի գրական հայերենի երկու ճյուղերը:

2. **Ներկայացնել** արևելահայերենի և արևմտահայերենի գործածության տարածաշրջանները:

**3.** Արևմտահայերեն մի քանի բառ **ասել:**

5. Արևմտահայերենով գրված մեկ կամ մի քանի ստեղծագործություն **անվանել:**

**Դաս 4. Արևմտահայերենի հնչյունական համակարգը:Արևմտահայերենի բառապաշարը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ տառ ունի հայոց այբուբենը: Անգի՛ր արտասանեք այն:
2. Արդյո՞ք նույնն է արևելահայերենի և արևմտահայերենի արտասանությունը:
3. Ինչպե՞ս կհնչեն **բերան** և **գերան** բառերը արևմտահայերենում: **Բ,գ** հնչյուններով սկսվող բառեր գրե՛ք, մտածե՛ք, թե ինչպես կարտասանվեն դրանք արևմտահայերեն:
4. Ըստ ձեզ՝ արևմտահայերենն ինչու՞ է խուսափում օտար բառերից:
5. Գրե՛ք տրված բառերի արևելահայերեն համարժեքները:

   *պստիկ -* *գեշ -* *լաթ-*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Հայոց այբուբենը:

2.Արևմտահայերենի և արևելահայերենի արտասանական տարբերության գոյությունը:

3.**Բ, գ** հնչյունների արևմտահայերեն արտասանությունը:

4.Արևմտահայերենի՝ օտար բառերից խուսափելու պատճառները:

5.Տրված արևմտահայերեն բառերի արևելահայ տարբերակները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Հիշել** արդի գրական հայերենի երկու ճյուղերը:

2. **Ներկայացնել** արևելահայերենի և արևմտահայերենի գործածության տարածաշրջանները**:**

**3.** Արևմտահայերեն մի քանի բառ **ասել:**

**4. Գրել** տրված արևմտահայերն բառերի արևելահայերեն համարժեքները:

**Դաս 5.Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ ժամանակ են ցույց տալիս **կը** մասնիկով կազմված բայերն արևմտահայերենում:
2. Գրե՛ք **շուն, ջուր, մուկ** բառերի արևմտահայերեն և արևելահայերեն հոգնակի ձևերը:
3. Հետևյալ միտքը փոխակերպե՛ք արևելահայերենի. «Ոչ ոք կ՛ուզեր մեռնիլ»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Արևմտահայերենում բայի սահմանական եղանակի ներկայի կազմություն
2. Տրված բառերի արևելահայերեն և արևեմտահայերեն հոգնակի ձևերը:
3. Տրված նախադասության արևելահայերեն տարբերակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Մտապահել** կը մասնիկի նշանակությունը արևմտահայերենում:

2. **Ըմբռնել** տրված բառերի հոգնակիի կազմության տարբերություններն արևելահայերենում և արևմտահայերենում:

3.**Հասկանալ** արևմտահայերեն պարզագույն մտքեր:

Դաս 6. Ձևաբանություն: Բառային իմաստ և քերականական իմաստ: Ձևույթներ

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է բառը:
2. Նախադասություն կազմելիս ի՞նչ է տեղի ունենում բառի հետ:
3. Տրված բառերը ձևափոխության ենթարկելով և դրանց հերթականությունը փոխելով՝ նախադասություն կազմի՛ր:

   *Համակարգչային, Արամ, զբաղվել, ամեն, երեկո, խաղեր:*
4. Ձևույթների քանի՞ տեսակ գիտես:

   Ընդգծի՛ր տրված բառերի հիմնական ձևույթները:

   *աղմկոտ, պարուհի, աննպատակ, ուրախություն*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բառի սահմանումը:
2. Բառի բառային և քերականական իմաստները:
3. Ձևույթների տեսակները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տալ** բառի սահմանումը:
2. **Տարբերել** բառի ուղիղ և թեք ձևերը:
3. **Թվարկել** և **տարբերել** ձևույթների տեսակները:

**Դաս 7. Հայերենի խոսքի մասերի համակարգը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ խոսքի մաս ունի հայերենը:
2. Թվարկի՛ր հայերենի խոսքի մասերը:
3. Ո՞ր խոսքի մասերն են  նյութական իմաստ արտահայտում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հայերենի խոսքի մասերի քանակը:
2. Խոսքի մասերը
3. Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նշել** խոսքի մասերի քանակը:
2. **Թվարկել** հայերենի խոսքի մասերը:
3. **Ճանաչել** նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը:

**Դաս 8. Գոյականի, ածականի և մակբայի հոմանշային շարքերը**

Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր բառերն են համարվում հոմանիշներ :
2. Ի՞նչ է հոմանիշների շարքը:
3. Ո՞ր խոսքի մասերն են առավելապես հարուստ հոմանիշներով:

   Գրի՛ր տրված բառերի հոմանիշները:

   *պատուհան, զավակ, քամի*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Ինչ է հոմանիշը:
2. Բազմանդամ հոմանիշների մասին:
3. Խոսքի մասերից հատկապես գոյականի, ածականի և մակբայի՝ հոմանշային շարքերով հանդես գալը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Բացատրել՝** ինչ է հոմանիշը:
2. **Ներկայացնել** հոմանշային շարքը:
3. **Թվարկել** այն խոսքի մասերը, որոնք հատկապես հարուստ են հոմանշային շարքերով: **Ասել** տրված բառերի հոմանիշները:

**Դաս 9. Գոյական անուն: Հատուկ և հասարակ գոյականներ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր բառերն են կոչվում գոյականներ:
2. Ի՞նչ հարցերի է պատասխանում գոյականը:
3. Ինչպե՞ս ենք տարբերում անձնանիշ և իրանիշ գոյականները;
4. Ինչպե՞ս են գրվում հատուկ գոյականները:

   Դուրս գրի՛ր տրված նախադասության հատուկ գոյականները:

   *Արարատն այդ օրն ասես ողջունում էր Եվրոպայից ու Ասիայից ժամանած սփյուռքահայերին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գոյականի սահմանումը:
2. Գոյականին տրվող հարցերը:
3. Անձ և իր ցույց տվող գոյականները:
4. Հատուկ գոյականների՝ մեծատառով գրվելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ճանաչել** գոյականը:
2. **Մտապահել** գոյականին տրվող հարցերը:
3. **Տարբերել** անձերն ու իրերը:
4. **Առանձնացնել** և **ճիշտ գրել** հատուկ գոյականները:

Դաս 10. Գոյականի թիվը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս գոյականի թիվը:
2. Քանի՞ թիվ ունի գոյականը:
3. Ո՞ր մասնիկներով և ինչպե՞ս է կազմվում հոգնակի թիվը:
   Կազմի՛ր տրված բառերի հոգնակի ձևերը:
   անտառ, լույս, արեգակ, դասարան
4. Տրված նախադասության եզակի գոյականներն ընդգծե՛ք մեկ գծով, հոգնակիները՝ երկու:
   *Կանայք աղբյուրից ջուր էին տանում դույլերով այգու գեղեցիկ ծառերի ու հրաշալի ծաղիկների համար:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Եզակի և հոգնակի թվի իմաստը:
2. Գոյականի՝ երկու թիվ ունենալը:
3. Հոգնակի թվի կազմությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ներկայացնել** գոյականի թվի քերականական կարգը:
2. **Տարբերակել** եզակի և հոգնակի գոյականները:
3. **Կազմել** եզակի գոյականների հոգնակին:

Դաս 11. Գոյականի առումը                                    Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպե՞ս ենք տարբերակում գոյականի անորոշ և որոշյալ առումները:
2. Ի՞նչ է ցույց գոյականի որոշյալ առումը:
3. Ի՞նչ է ցույց տալիս անորոշ առումը:

   Դու՛րս գրեք տրված նախադասության այն գոյականները, որոնք անորոշ առում ունեն:

   *Արմենը տետր ու գրիչ գնեց պարապելու համար:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գոյականի որոշյալ և անորոշ առումների տարբերությունը:
2. Որոշյալ առման իմաստը :
3. Անորոշ առման իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերել** որոշյալ և անորոշ առումները :
2. **Բացատրել** որոշյալ առման իմաստը:
3. **Բացատրել** անորոշ առման իմաստը:

**Դաս 12. Գոյականի հոլովները: Ուղղական հոլով** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ հոլով ունի գոյականը:
2. Որո՞նք են գոյականի հոլովները:
3. Ի՞նչ հարցերի է պատասխանում ուղղական հոլովով դրված գոյականը:
   Ընդգծի՛ր նախադասությունների՝ ուղղական հոլովով դրված բառերը:
   *Տղան ու աղջիկը հոգնել էին այդ վեճերից:*
   *Նունեն հիանանում էր գեղեցիկ ծաղիկներով, երբ նրան մոտեցավ քույրը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գոյականի հոլովները:
2. Ուղղական հոլովի հարցերը:
3. Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

**1.Թվարկել** հոլովները:
**2.Տարբերել** ուղղական հոլովը:
**3. Մտապահել** ուղղական հոլովի հարցերը:

**Դաս 13. Սեռական  հոլով**                                [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս սեռական հոլովը:
2. Որո՞նք են սեռական հոլովի հարցերը:
3. Ի՞նչ վերջավորություններ է ունենում սեռական հոլովը ( նշիր առնվազն երեքը): Դուրս գրե՛ք նախադասության այն գոյականները, որոնք դրված են սեռական հոլովով:

   *Կնոջ հայացքում թախիծ կար.  տան առաստաղի գերանները ծռվել էին, հատակի տախտակները ՝փտել, իսկ այգու ծառերն անխնամ վիճակում էին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Սեռական հոլովի արտահայտած իմաստը:
2. Սեռական հոլովի հարցերը:
3. Սեռական  հոլովի վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Բացատրել**  սեռական հոլովի իմաստը:
2. **Առանձնացնել** սեռական  հոլովի հարցերը:
3. **Տարբերել** սեռական  հոլովով դրված գոյականները:

Դաս 14. Տրական հոլով Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս տրական հոլովը:
2. Որո՞նք են տրական հոլովի հարցերը:
3. Ո՞ր հոլովից է կազմվում տրական հոլովը:

Ընդգծի՛ր նախադասության այն գոյականը, որը դրված է տրական հոլովով:

*Աննան դանդաղ քայլերով մոտեցավ խանութի ցուցափեղկին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Տրական հոլովի արտահայտած իմաստը:
2. Տրական հոլովի հարցերը:
3. Տրական հոլովի՝ սեռականից կազմվելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ներկայացնել** տրական հոլովը:
2. **Առանձնացնել** տրական հոլովի հարցերը:
3. **Հասկանալ** տրական հոլովի կազմությունը:

Դաս 15. Հայցական  հոլով                                   [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս հայցական հոլովը:
2. Դու՛րս գրիր նախադասության՝ հայցական հոլովով դրված գոյականը:

   *Տղան վերցրեց ընկած ոսկեղրամը:*
3. Որո՞նք են հայցական հոլովի հարցերը:

   *Ո՞ր հոլովներին է նման հայցական հոլովը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հայցական հոլովի հարցերը:
2. Հայցական  հոլովի վերջավորությունները:
3. Հայցական հոլովի՝ ուղղական կամ տրական հոլովներին նման լինելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

**1. Առանձնացնել** հայցական  հոլովի հարցերը:

**2 .Տարբերել** հայցական  հոլովով դրված գոյականները:

**3. Հիշել**՝ որ հոլովներին է նման հայցական հոլովը:

**Դաս 16. Բացառական    հոլով**                                        [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս բացառական հոլովը:
2. Որո՞նք են բացառական հոլովով դրված գոյականներին տրվող հարցերը:
3. Ի՞նչ վերջավորություններ է ունենում բացառական հոլովը:

   Ընդգծի՛ր այն գոյականները, որոնք դրված են բացառական հոլովով:

   *անտառից, գետակով, կամրջից, ծառերից, երգով, բույրից, միտքը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բացառական հոլովի արտահայտած իմաստը:

2.Բացառական հոլովով դրված գոյականներին տրվող հարցերը:

3.Բացառական  հոլովի վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերել** բացառական  հոլովով դրված գոյականները:
2. **Առանձնացնել** բացառական  հոլովի հարցերը:
3. **Թվարկել**  բացառական հոլովի վերջավորությունները:

**Դաս 17. Գործիական    հոլով**                                   [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս գործիական հոլովը:
2. Որո՞նք են գործիական հոլովի հարցերը:
3. Ի՞նչ վերջավորություններ է ունենում գործիական հոլովը:
   Ընդգծե՛ք նախադասությունների այն գոյականները, որոնք դրված է գործիական հոլովով:

*Մրգերն այգուց բերում էինք մեծ - մեծ զամբյուղներով:*

*Արահետով անցնող ձիավորը զգուշացավ ձայներից:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գործիական հոլովի արտահայտած իմաստը:
2. Գործիական  հոլովով դրված գոյականներին տրվող հարցերը:
3. Գործիառական հոլովի վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ներկայացնել** գործիական  հոլովը:
2. **Նշել** գործիառական  հոլովի հարցերը:
3. **Տարբերել** գործիական  հոլովով դրված գոյականները:

**Դաս 18. Ներգոյական  հոլով** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է ցույց տալիս ներգոյական հոլովը:
2. Որո՞նք են ներգոյական հոլովի հարցերը:
3. Ի՞նչ վերջավորություն ունի ներգոյական հոլովը:
   Գրի՛ր, թե ներգոյական հոլովով դրված քանի գոյական կա տրված նախադասության մեջ:
   *Գյուղի բակերում ու փողոցներում, խանութներում ու ակումբում մարդիկ խոսում էին միայն այդ զամանալի օտարականի մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Ներգոյական հոլովի արտահայտած իմաստը:
2. Ներգոյական  հոլովով դրված գոյականներին տրվող հարցերը:
3. Ներգոյական հոլովի վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

**1.Ներկայացնել** ներգոյական հոլովը:

**2.Առանձնացնել** ներգոյական  հոլովի հարցերը:

**3 .Տարբերել** ներգոյական  հոլովով դրված գոյականները:

**Դաս 19. Բայ: Դիմավոր և անդեմ բայեր** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր բառերն են կոչվում բայ:
2. Ո՞ր բայերն են կոչվում դիմավոր:
3. Ո՞ր բայերն են կոչվում անդեմ:

   Դիմավոր բայերն ընդգծի՛ր մեկ գծով, անդեմ բայերը՝ երկու

   *մտահոգվել, կարծում եմ, նկարելիս, նկատելու է*
4. Ուրիշ ի՞նչ կերպ են անվանում անդեմ բայերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բայի սահմանումը:
2. Դիմավոր բայերի սահմանումը:
3. Անդեմ բայերի սահմանումը:
4. Անդեմ բայերին տրվող մյուս անվանումը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Սահմանել** «բայ» հասկացությունը:
2. **Զանազանել** դիմավոր և անդեմ բայերը:
3. **Անվանել** «դերբայ» եզրույթը:

Դաս 20. Դերբայներ: Անկախ դերբայներ: Անորոշ դերբայ   Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ դերբայ ունի ժամանակակից հայերենը:
2. Քանի՞ խմբի են բաժանվում հայերենի դերբայները:
3. Կախյալ դերբայները ո՞ր բայի միջոցով են ստորոգյալ դառնում:
4. Ո՞ր դերբայն է ցույց տալիս բայի ուղիղ ձևը:
5. Ի՞նչ վերջավորություններ ունի անորոշ դերբայը:

Դուրս գրե՛ք տրված նախադասության անորոշ դերբայները:

*Սիրում եմ լսել աշնան անձրևի թախծոտ մեղեդին, տխրել նրա հետ ու երազել:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հայերենի դերբայների քանակը:
2. Դերբայների՝ երկու խմբի բաժանվելը:
3. Կախյալ դերբայների՝ ստորոգյալ դառնալու նախապայմանը:
4. Անորոշ դերբայի՝ բայի ուղիղ ձևը լինելը:
5. Անորոշ դերբայի վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Նշել** դերբայների քանակը:
2. **Մտապահել** դերբայների՝ երկու խմբի բաժանվելը:
3. **Ներկայացնել** կախյալ դերբայների հետ **եմ** բայի գործածությունը:
4. **Անվանել** բայի ուղիղ ձև համարվող դերբայը:
5. **Նշել** անորոշ դերբայի վերջավորությունները:

## Դաս 21. Համակատար և հարակատար դերբայներ [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն ունի համակատար դերբայը:
   Ընդգծի՛ր համակատար դերբայները:
   *Ուտելիս չի կարելի խոսել, իսկ խմելիս՝ շտապել:*
2. Ի՞նչ վերջավորություն ունի հարակատար դերբայը:
   Դու՛րս գրեք տրված նախադասության հարակատար դերբայները:
   *Ծերունին դառնացած պատմում էր իրենց դժվար կյանքի ու լքված գյուղի մասին:*
3. Հարակատար դերբայը կարո՞ղ է հոլովվել:
   Նախադասություններ կազմե՛ք *ճերմակած, ծերացած* հարակատար դերբայներով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Համակատար դերբայի վերջավորությունը:
2. Հարակատար դերբայի վերջավորությունը:
3. Հարակատար դերբայի հոլովվելու հնարավորությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նշել** համակատար դերբայի վերջավորությունը:
2. **Նշել** հարակատար դերբայի վերջավորությունը:
3. **Ներկայացնել** հարակատար դերբայի հոլովվելու հնարավորությունը:

Դաս 22. Ենթակայական դերբայ [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն ունի ենթակայական դերբայը:

   Դո՛ւրս գրիր տրված հատվածի ենթակայական դերբայները:

   *Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,*

   *Գիշերում այս անշող,*

   *Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,*

   *Մոռացման ոսկե շող…*

2. Ենթակայական դերբայը կարո՞ղ է հոլովվել:
3. Ենթակայական դերբայը կարո՞ղ է հոգնակի թվով գործածվել:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ենթակայական դերբայի վերջավորությունը:
2. Ենթակայական դերբայի հոլովվելու հնարավորությունը:
3. Ենթակայական դերբայի փոխանվանաբար գործածվելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Նշել** ենթակայական դերբայի վերջավորությունը:
2. **Ներկայացնել** դրա հոլովվելու հնարավորությունը:
3. **Նշել** ենթակայական դերբայի հոգնակի թիվ ստանալը:

**Դաս 23. Կախյալ դերբայներ կամ ձևաբայեր** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞րն է կախյալ դերբայներին տրվող մյուս անունը:
2. Կախյալ դերբայները նախադասության մեջ կարո՞ղ են առանց օժանդակ բայի հանդես գալ:
3. Քանի՞սն են կախյալ դերբայները:
4. Տրված շարքում ընդգծի՛ր կախյալ դերբայները:

*անորոշ, վաղակատար, հարակատար, ապակատար*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա․**

1.Կախյալ դերբայներին տրված մյուս անունը:

2.Կախյալ դերբայների՝ օժանդակ բայի հետ գործածվելը:

3. Հայերենի ձևաբայերի քանակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար *սովորողը պետք է կարողանա․***

1. **Մտապահել** կախյալ դերբայներին տրվող մյուս անունը:
2. **Ներկայացնել** կախյալ դերբայների և օժանդակ բայի կապը:
3. **Նշել** ձևաբայերի քանակը:

**Դաս 24. Անկատար դերբայ (ձևաբայ):** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն ունի անկատար դերբայը:

   Դու՛րս գրիր տրված նախադասության անկատար դերբայները (ձևաբայերը):

   *Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում:*

2. Դատելով անունից՝ նշի՛ր, թե ինչպիսի գործողություն է ցույց տալիս անկատար դերբայը:

3. Ո՞ր բայի հետ է դիմավոր ձևեր կազմում անկատար դերբայը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա․**

1. Անկատար դերբայի վերջավորությունը:
2. Անկատար դերբայի ցույց տված գործողությունը:
3. Անկատար դերբայի՝ օժանդակ բային միանալը և դիմավոր ձև կազմելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա․**

1. **Ճանաչել** անկատար ձևաբայը:
2. **Նշել** անկատար դերբայի ցույց տված գործողությունը:
3. **Ներկայացնել** անկատար դերբայի՝ դիմավոր ձևեր կազմելու նախապայմանը:

**Դաս 25.** Ապակատար դերբայ (ձևաբայ) [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն է ավելանում անորոշ դերբային ապակատար ձևաբայ կազմելիս:
   Տրված նախադասության մեջ առանձնացրու՛ ապակատար դերբայները:
   *Ես պաշտում եմ ու միշտ պաշտելու եմ Հայաստանը, խոնարհվելու եմ ձեր աշխատասեր ու իմաստուն ժողովրդի առջև:*
2. Ո՞ր բայի հետ է պարզ ստորոգյալ կազմում ապակատար դերբայը:
3. Ի՞նչ ես հասկանում՝ «ապակատար» ասելով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ապակատար դերբայի վերջավորությունը:
2. Ապակատար դերբայի՝ օժանդակ բային միանալը և դիմավոր ձև կազմելը:
3. «Ապակատար» բառի բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Նշել** ապակատար դերբայի վերջավորությունը:
2. **Ներկայացնել** օժանդակ բայի և ապակատար դերբայի կապը:
3. **Բացատրել** «ապակատար» բառի նշանակությունը:

**Դաս 26.** Վաղակատար դերբայ [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն ունի վաղակատար դերբայը:
2. Ի՞նչ է նշանակում «վաղակատար» բառը:
3. Ո՞ր բայի հետ է դիմավոր ձևեր կազմում վաղակատար դերբայը:
4. Առանձնացրե՛ք հատվածի վաղակատար դերբայները::

*Իմ պապը հողի հետ*

*Խորհել ու խոսել է,*

*Ամպի հետ արտասվել,*

*Ջրի հետ հոսել է…*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա․**

1. Վաղակատար դերբայի վերջավորությունը:
2. «Վաղակատար» բառի բացատրությունը:
3. Վաղակատար դերբայի՝ օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր կազմելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա․**

**1.Ճանաչել** վաղակատար դերբայը:

**2. Բացատրել** վաղակատար բառի իմաստը:

**3. Նշել** վաղակատար դերբայի՝ դիմավոր ձևեր կազմելու նախապայմանը:

Դաս 27. Ժխտական դերբայ [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում ժխտել:

Ըստ քեզ՝ օժանդակ բայի դրակա՞ն, թե՞ ժխտական ձևին է միանում ժխտական դերբայը:

3. Որո՞նք են ժխտական ձևաբայի վերջավորությունները:

4. Գտի՛ր ժխտական դերբայները:

*Այս տարի նա երևի չի գա:*

*Նամակս հաստատ չի կարդա:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Ժխտել» բառի բացատրությունը:
2. Ժխտական ձևաբայի վերջավորությունները:
3. ժխտական ձևաբայի՝ օժանդակ բայի ժխտական ձևերին միանալը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Բացատրել** ժխտել բայը:
2. **Ճանաչել** ժխտական դերբայը:
3. **Ներկայացնել** ժխտական ձևաբայի՝ օժանդակ բայի ժխտական ձևերին միանալը:

**Դաս 28. Խոնարհում: Բայի եղանակները: Բայի ժամանակները**

Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ իմաստներ ունի «եղանակ» բառը:
2. Քանի՞ եղանակ ունի բայը հայերենում:
3. Թվարկի՛ր բայի ժամանակները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Եղանակ բառի առնվազն երկու իմաստ:
2. Բայի եղանակների թիվը:
3. Բայի ժամանակների անվանումները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նշել** եղանակ բառի առնվազն երկու իմաստ:
2. **Ասել** բայի եղանակների թիվը:
3. **Թվարկել** բայի ժամանակները:

**Դաս 29. Բայի դեմքը և թիվը: Օժանդակ բայ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ դեմք ունի բայը:
2. Թվարկե՛ք բայի դեմքերը:
3. Քանի՞ թիվ ունի բայը:
4. Ո՞ր բայն է կոչվում օժանդակ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Քանի դեմք ունի բայը:
2. Բայի դեմքերը:
3. Քանի թիվ ունի բայը:
4. Օժանդակ բայը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նշել՝** քանի դեմք ունի բայը:
2. **Թվարկել** բայի դեմքերը:
3. **Նշել՝** քանի թիվ ունի բայը:
4. **Ճանաչել** օժանդակ բայը:

Դաս 30. Սահմանական եղանակ: Անկատար ներկա: Անկատար անցյալ

Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպիսի՞ գործողություն է ցույց տալիս սահմանական եղանակը:
2. Քանի՞ ժամանակաձև ունի սահմանական եղանակը:
3. Սահմանական եղանակի առնվազն 2 ժամանակաձև նշե՛ք:
4. Ո՞րն է անկատար ձևաբայի վերջավորությունը:

*Անկատար ներկա ժամանակաձևով դրված բայերն ընդգծե՛ք մեկ գծով, անկատար անցյալով դրվածները՝ երկու:*

*տեսնում էի, զգում եմ, նայում էր, կարծում է, համոզում էիր*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Սահմանական եղանակի ցույց տված գործողությունը:
2. Սահմանական եղանակի ժամանակաձևերի թիվը և անվանումները (առնվազն 2 ժամանակաձև):
3. Անկատար ձևաբայի վերջավորությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Թվարկել** բայի եղանակները:
2. **Մտապահել** սահմանական եղանակի կանոնը:
3. **Հիշել** ժամանակաձևերից առնվազն երեքը:
4. **Ասել** անկատար ձևաբայի վերջավորությունը:

**Դաս 31. Ապակատար ներկա և անցյալ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞րն է ապակատար ձևաբայի վերջավորությունը:

2.Ինչպե՞ս է կազմվում ապակատար ներկա ժամանակաձևը:

3.Ինչպե՞ս է կազմվում ապակատար անցյալ ժամանակաձևը:

Ընդգծե՛ք ապակատար անցյալով դրված ժամանակաձևերը:

*Տեսնելու էի, լսում ես, իմանալու էիր, կանգնել եմ, լռում եմ, մտածելու էի:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Ապակատար ձևաբայի վերջավորությունը:

2.Ապակատար ներկա ժամանակաձևի կազմությունը:

3.Ապակատար անցյալ ժամանակաձևի կազմությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Ներկայացնել** ապակատար ձևաբայի վերջավորությունը:

2.**Խոնարհել** տրված բայը ապակատար ներկա ժամանակով:

3.**Ընդգծել** ապակատար անցյալ ժամանակաձևով բայերը:

**Դաս 32.Վաղակատար ներկա և անցյալ ժամանակաձևեր** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**:

1. Ինչպիսի՞ գործողություն է ցույց տալիս վաղակատար ներկա ժամանակաձևը:
2. Ինչպե՞ս է կազմվում վաղակատար անցյալ ժամանակաձևը:
3. Ներկայացրու՝ ինչ է նշանակում գործողության ժխտում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Վաղակատար ներկա ժամանակաձևի կազմությունը:

2.Վաղակատար անցյալ  ժամանակաձևի կազմությունը:

3.Գործողության ժխտումը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.**Ճանաչել** վաղակատար ներկա ժամանակաձևով դրված բայերը:

2.**Մտապահել** վաղակատար անցյալ ժամանակաձևի կազմությունը:

3.**Մտապահել** ժխտական ձևերի կազմությունը:

**Դաս. 33. Անցյալ կատարյալ ժամանակաձև** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1.Ինչպիսի՞ գործողություն է ցույց տալիս անցյալ կատարյալ ժամանակաձևը:
2. Ինչո՞վ է տարբերվում անցյալ կատարյալ ժամանակաձևը սահմանական եղանակի մյուս ժամանակաձևերից:
3.Նշե՛ք՝ որ մասնիկի օգնությամբ են կազմվում անցյալ կատարյալ ժամանակաձևի ժխտական ձևերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Անցյալ կատարյալ ժամանակաձևի սահմանումը:
2.Անցյալ կատարյալի ցույց տված ժամանակը:
3.Անցյալ կատարյալի ժխտական ձևերի կազմությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Սահմանել** անցյալ կատարյալ ժամանակաձևը:
2.**Խոնարհել** տրված բայը անցյալ կատարյալ ժամանակաձևով:
3.**Կազմել** անցյալ կատարյալ ժամանակաձևի ժխտական ձևերը:

**Դաս 34. Հրամայական եղանակ, կազմությունը: Արգելական հրամայական**

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Կետադրական ո՞ր նշանն ենք պարտադիր կիրառում հրամայական բայերի վրա:

2.Կետադրե՛ք հրամայական եղանակի հետևյալ բայերը:

*երգիր, մի խոսիր, նստիր, պատմեք, լռիր, մի լռիր*

3.Ո՞ր ժամանակով է հանդես գալիս հրամայական եղանակը:

4.Ո՞ր մասնիկով է կազմվում արգելական հրամայականը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Հրամայական եղանակի բայերի պարտադիր շեշտ կրելը:

2.Հրամայական եղանակի մեկ` ապառնի, ժամանակաձև ունենալը:

3.Հրամայական եղանակի բայերի՝ միայն երկրորդ դեմքով հանդես գալը:

4.Արգելական հրամայական բայերի՝ **մի** մասնիկով կազմվելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Կետադրել** հրամայական եղանակի բայերը` կիրառելով շեշտը:

2.**Ներկայացնել** հրամայական եղանակի ժամանակը:

3.**Մտապահել** արգելական հրամայականի՝ **մի** մասնիկով հանդես գալ:

**Դաս 35. Ըղձական եղանակ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1.Ինչու՞ է եղանակը կոչվում **ըղձական**. ո՞րն է բառի արմատը:

2 Ինչպիսի՞ գործողություն է ցույց տալիս ըղձական եղանակը:

3. Ո՞ր բառն կամ բառերն են օգնում «գտնել» ըղձական եղանակի բայաձևերը:

Ընդգծե՛ք ըղձական եղանակի բայաձևերը:

*գնամ, գնում եմ, գնայինք, պատմեցի, տեսնեն*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. «Ըղձական» բառի բացատրությունը:
2. Ըղձական եղանակի ցույց տված գործողությունը:
3. Ըղձական եղանակի բայաաձևերի հետ հաճախ գործածվող բառերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Բացատրել** ըղձական եղանակի անվան նշանակությունը:

2.**Մտապահել** ըղձական եղանակի ցույց տված գործողությունը:

3.**Գտնել** ըղձական եղանակի բայաձևերը տրված շարքում:

**Դաս 36. Ենթադրական եղանակ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում ենթադրել:
2. Ո՞ր եղանակիչն է ավելանում ըղձական եղանակին ենթադրական եղանակի ժամանակաձևերը կազմելիս:
3. Նշե՛ք, թե ինչպիսի՞ գործողություն են ցույց տալիս ենթադրական եղանակի բայաձևերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. «Ենթադրել» բառի բացատրությունը:
2. Կը եղանակիչի մասին:
3. Ենթադրական եղանակի ցույց տված գործողությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Բացատրել «**ենթադրել» բառը:

2.**Ներկայացնել** ենթադրական եղանակի ցույց տված գործողությունը:

3.**Մտապահել** կ եղանակիչը:

**Դաս 37. Հարկադրական եղանակ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ եք հասկանում՝ **հարկադրանք** ասելով:
2. Որո՞նք են հարկադրական եղանակի եղանակիչները:
3. Նշե՛ք՝ ինչպիսի գործողություն է ցույց տալիս հարկադրական եղանակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. «Հարկադրանք» բառի բացատրությունը:
2. **Պիտի** և **պետք է** եղանակիչներով կազմելը:
3. Հարկադրական եղանակի ցույց տված գործողությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Բացատրել «**հարկադրանք» բառի իմաստը:
2.**Հիշել պիտի** և **պետք է** եղանակիչները:
3.**Մատնանշել** հարկադրական եղանակի ցույց տված գործողությունը:
անցյալ ժամանակաձևի դրական խոնարհմամբ դրված բայերը **դարձնել** ժխտական:

**Դաս 38. Շարահյուսություն: Շարահյուսական հոմանիշներ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպե՞ս կարելի է սահմանել բառակապակցությունը:

2. Ի՞նչ է նախադասությունը:

3. Ինչո՞վ են տարբերվում պարզ և բարդ նախադասությունները:

4. Ի՞նչ է նշանակում շարահյուսական հոմանշություն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Բառակապակցությունը՝ որպես լեզվական միավոր:

2. Նախադասության սահմանումը:

3. Պարզ և բարդ նախադասությունների տարբերակիչ գծերը:

4. Միևնույն միտքը շարահյուսական տարբեր կառույցներով արտահայտելու հնարավորության մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.**Կազմել** բառակապակցություններ:

2.**Տարբերակել** բառակապակցությունը և նախադասությունը:

3.**Հաշվել** նախադասության ստորոգյալները:

4. **Նկարագրել** *շարահյուսական հոմանիշ* հասկացությունը:

**Դաս 39. Բարդ բառ և բառակապակցություն** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որո՞նք են բառ կազմող միավորները:
2. Ո՞ր բառերն են կոչվում բարդ:
3. Ինչո՞վ է բառը տարբերվում բառակապակցությունից:
4. Ինչպիսի՞ բառերն են կոչվում հոմանիշ:
5. Հնարավո՞ր է նույն կամ մոտ իմաստն արտահայտել և՛ բառի, և՛ բառակապակցության միջոցով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. *Արմատ, ածանց, հոդակապ* հասկացությունները:
2. Բարդ բառի սահմանումը:
3. Բառի և բառակապակցության տարբերությունը:
4. *Հոմանիշ* հասկացությունը:
5. Բառի և բառակապակցության հոմանշության հնարավորության մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերակել** արմատը ածանցից:
2. **Հաշվել** բառի արմատները:
3. **Ցույց տալ** բառի և բառակապակցության տարբերությունը:
4. **Նկարագրել** *հոմանիշ* հասկացությունը:
5. **Համապատասխանեցնել** տրված բարդ բառերը հոմանիշ բառակապակցություններին:

Դաս 40. Հոլովաձև և կապական կառույց [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում բառի հոլովում:
2. Քանի՞ հոլով ունի հայերենը:
3. Բառերն ինչու՞ են հոլովվում:
4. Ո՞ր խոսքի մասն է կոչվում *կապ*:
5. Ինչո՞վ են իրար նման հոլովաձևը և կապական կառույցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հայերենի հոլովների անվանումները:
2. Հոլովների թիվը:
3. Հոլովի նշանակությունը խոսք կազմելիս:
4. Կապի դերը խոսք կազմելիս:
5. Հոլովաձևի և կապական կառույցի հոմանշության մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Թվարկել** հայերենի հոլովները:
2. **Բացատրել** հոլովման դերը:
3. Ուղիղ ձևով տրված բառերը հոլովելով՝ **նախադասություն կազմել:**
4. Տրված կապերը **տեղադրել** նախադասության բաց թողած տեղերում:
5. **Համապատասխանեցնել** տրված հոմանիշ հոլովաձևերը և կապական կառույցները:

**Դաս 41. Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն**

[Թեմատիկ պլանավորում]()

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչո՞վ է անդեմ բայը տարբերվում դիմավոր բայից:
2. Այլ կերպ ինչպե՞ս են անվանում անդեմ բայերը:
3. Ինչո՞վ են տարբերվում անկախ դերբայները կախյալ դերբայներից:
4. Ո՞ր բառակապակցությունն է կոչվում դերբայական դարձված:
5. Դերբայական դարձվածի միտքն ուրիշ կերպ ինչպե՞ս կարելի է արտահայտել:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բայի անդեմ և դիմավոր ձևերի տարբերությունը:
2. *Դերբայ* հասկացությունը:
3. Անկախ և կախյալ դերբայների տարբերությունը:
4. Դերբայական դարձվածի բացատրությունը:
5. Բարդ ստորադասական նախադասության բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ճանաչել** դիմավոր և անդեմ բայերը:
2. Տրված բայերի մեջ **ընդգծել** դերբայները;
3. **Ցույց տալ** անկախ և կախյալ դերբայների տարբերությունը:
4. **Նկարագրել** *դերբայական դարձված* հասկացությունը:
5. **Համապատասխանեցնել** դերբայական դարձվածներով նախադասությունները դրանց հոմանիշ բարդ ստորադասական նախադասություններին:

**Դաս 42.Դերբայական դարձվածի կետադրությունը:** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ վերջավորություն ունեն անորոշ և հարակատար դերբայները:
2. Եթե դերբայական դարձվածը նախադաս դիրքում է, ի՞նչ կետադրական նշան է դրվում:
3. Եթե դերբայական դարձվածը վերջադաս դիրքում է, դրանից առաջ ի՞նչ կետադրական նշան է դրվում:
4. Ինչպե՞ս է միջադաս դերբայական դարձվածն առանձնանում նախադասության մյուս հատվածներից:
5. Ո՞ր անկախ դերբայներով կազմված դերբայական դարձվածներն են, որոնք կետադրական նշաններով չեն զատվում նախադասության մյուս հատվածներից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Անորոշ և հարակատար դերբայների վերջավորությունները:
2. Բութի գործածությունը նախադաս դերբայական դարձվածի դեպքում:
3. Բութի գործածությունը վերջադաս դերբայական դարձվածի դեպքում:
4. Ստորակետի գործածությունը միջադաս դերբայական դարձվածի դեպքում:
5. Համակատար և ենթակայական դերբայների վերջավորությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերակել** անորոշ և ենթակայական դերբայները:

2. **Նշանակել** բաց թողած կետադրական նշանը նախադաս դիրքով տրված դերբայական դարձվածի դեպքում:

3. **Ցույց տալ** բաց թողած կետադրական նշանի տեղը վերջադաս դիրքով տրված դերբայական դարձվածի դեպքում:

4. **Ցույց տալ** բաց թողած կետադրական նշանների տեղը միջադաս դիրքով տրված դերբայական դարձվածի դեպքում:

5. Տրված դերբայների մեջ **ընդգծել** համակատար և ենթակայական դերբայները:

**Դաս 43. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի և հակառակը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչո՞վ է տարբերվում բարդ նախադասությունը պարզ նախադասությունից:
2. Քանի՞ տեսակ ունի բարդ նախադասությունը:
3. Ի՞նչ է նշանակում բարդ ստորադասական նախադասութան փոխակերպում պարզի:
4. Ինչի՞ է վերածվում ստորադաս նախադասության ստորոգյալը բարդ նախադասությունը պարզ դարձնելու դեպքում:
5. Ստորադաս նախադասությունը պարզեցնելիս ինչո՞վ են փոխարինվում շաղկապները և հարաբերական բառերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Պարզ և բարդ նախադասությունների տարբերակիչ առանձնահատկությունը:
2. Բարդ նախադասության տեսակները:
3. Ստորադաս նախադասության կրած փոփոխությունը փոխակերպման արդյունքում:
4. Ստորադաս նախադասության ստորոգյալի վերածվելն անկախ դերբայի:
5. Ստորադաս նախադասության կապակցող շաղկապի կամ հարաբերական բառի փոխարինվելը կապով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Տրված տեքստում **ընգծել** բարդ նախադասությունները:

2. **Հիշել** բարդ նախադասության տեսակները:

3. **Հաշվել** նախադասության ստորոգյալները:

4. **Համապատասխանեցնել** ստորադաս նախադասություններն իրենց հոմանիշ պարզ նախադասություններին:

5. Տրված շաղկապներն **առանձնացնել** կապերից:

**Դաս 44. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման իմաստային - քերականական առանձնահատկությունները** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որո՞նք են նախադասության գլխավոր և երկրորդական անդամները:
2. Ինչո՞վ են առանձնանում բարդ նախադասությանգերադաս և ստորադաս նախադասությունները:
3. Ի՞նչ սկզբունքով է որոշվում ստորադաս նախադասության պաշտոնը:
4. Բայի ժամանակը պահպանվու՞մ է ստորադաս նախադասությունը փոխակերպելիս:

5.Ո՞ր կապերով են փոխարինվում *որովհետև, քանի որ*, *որպեսզի* շաղկապները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամները:
2. Գերադաս և ստորադաս նախադասությունները:
3. Ստորադաս նախադասության պաշտոնի որոշման սկզբունքը:
4. Բայի ժամանակի պահպանումը:
5. Մի շարք շաղկապների իմաստն արտահայտող կապերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Առանձնացնել** գլխավոր անդամները երկրորդականներից:
2. **Տարբերակել** գերադաս և ստորադաս նախադասությունները:
3. **Ճանաչել** ստորադաս նախադասության պաշտոնը:
4. **Հիշել** բայի ժամանակի պահպանման սկզբունքը:
5. Շաղկապները **համապատասխանեցնել** կապերին

**Դաս 45. Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգման համար**

1. Ի՞նչ է նշանակում մեջբերվող խոսք:
2. Խոսքը քանի՞ եղանակով է կարելի մեջբերել:
3. Ինչու՞ են մեջբերվող միևնույն խոսքի երկու տեսակները կոչվում շարահյուսական հոմանիշներ:
4. Ի՞նչ բայերով կարող է կապվել ուղղակի խոսքը հեղինակի խոսքին:
5. Քանի՞ դիրքում կարող է լինել հեղինակի խոսքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. *Մեջբերվող խոսք* հասկացության իմաստը:
2. Մեջբերվող խոսքի ուղղակի և անուղղակի ձևերի տարբերակիչ առանձնահատկությունը:
3. Միևնույն մեջբերվող խոսքի ուղղակի և անուղղակի ձևերի՝ շարահյուսական հոմանիշ լինելու հանգամանքը:
4. Ուղղակի խոսքը հեղինակի խոսքին կապող հիմնական բայերը:
5. Հեղինակի խոսքի՝ ուղղակի խոսքի նկատմամբ նախադաս, միջադաս և վերջադաս դիրքում լինելու հնարավորությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նկարագրել** *մեջբերվող խոսք* հասկացությունը:
2. **Ճանաչել** մեջբերվող խոսքի ուղղակի և անուղղակի ձևերը:

3. **Նկարագրել** մեջբերվող միևնույն խոսքի՝ շարահյուսական հոմանիշ լինելու հանգամանքը:

4. **Թվարկել** ուղղակի խոսքը հեղինակի խոսքին կապող հիմնական բայերը:

5. **Խմբավորել** նախադասությունները՝ ըստ հեղինակի խոսքի նախադաս, միջադաս և հետադաս լինելու:

**Դաս 46. Մեջբերվող ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի:** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Անուղղակի խոսքի դեպքում ի՞նչ դիրքում է լինում հեղինակի խոսքը:
2. Հիմնականում ո՞ր շաղկապով է անուղղակի խոսքը կապակցվում հեղինակի խոսքին:
3. Հարցում արտահայտող ուղղակի խոսքն անուղղակիի վերածելիս ի՞նչ շաղկապ է ի հայտ գալիս:
4. Հրամայական եղանակի բայով ստորոգյալ ունեցող ուղղակի խոսքն անուղղակի դարձնելիս ի՞նչ բառ է ավելանում:
5. Դիմային ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում ուղղակի խոսքն անուղղակիի վերածելիս:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Անուղղակի խոսքում հեղինակի խոսքի՝ նախադաս դիրքում լինելու իրողությունը:
2. *Որ* շաղկապի նշանակությունն անուղղակի խոսքում:
3. *Թե* շաղկապի նշանակությունն անուղղակի խոսքում:
4. *Թող* շաղկապի նշանակությունն անուղղակի խոսքում:
5. Դիմային փոփոխությունների կարևորությունն ուղղակի խոսքն անուղղակիի վերածելիս:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Հիշել** անուղղակի խոսքում հեղինակի խոսքի նախադաս լինելու իրողությունը:

2. **Անվանել** անուղղակի խոսքը հեղինակի խոսքին կապող հիմնական շաղկապը:

*3.* **Հիշել** *թե* շաղկապի գործածության պայմանը:

*4.* **Անվանել** հրամայական եղանակի բայով արտահայտված ստորոգյալ ունեցող ուղղակի խոսքի փոխակերպման ժամանակ ի հայտ եկող բառը:

*5.* Տրված փոխակերպված նախադասությունների մեջ **ընդգծե**լ դիմային սխալ ունեցողները:

**Դաս 47. Ուղղակի խոսքի կետադրությունը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Մեջբերվող ուղղակի խոսքը պայմանականորեն ի՞նչ երկու տեսակի է բաժանվում:
2. Եթե հեղինակի խոսքը նախադաս է, կետադրական ի՞նչ նշանով է առանձնանում ուղղակի խոսքից:
3. Եթե հեղինակի խոսքը հետադաս է, ի՞նչ կետադրությամբ է առանձնանում ուղղակի խոսքից:
4. Ո՞ր դեպքում է հեղինակի խոսքից և՛ առաջ, և՛ հետո ստորակետ - գիծ դրվում:
5. Ո՞ր դեպքում է մեջբերվող ուղղակի խոսքը չակերտի մեջ առնվում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հնչող և չհնչող մեջբերվող խոսքի տարբերությունը:
2. Միջակետի գործածությունը հեղինակի խոսքի նախադաս լինելու դեպքում:
3. Ստորակետ – գծի գործածությունը հեղինակի խոսքի հետադաս լինելու դեպքում:
4. Ուղղակի խոսքի կետադրությունը հեղինակի խոսքի միջադաս լինելու դեպքում:
5. Չհնչող ուղղակի խոսքի կետադրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերակել** հնչող և չհնչող ուղղակի խոսքը:
2. Տրված նախադասությունների մեջ **նշանակել** միջակետը հեղինակի նախադաս խոսքից հետո:

3. Տրված նախադասությունների մեջ **նշանակել** ստորակետ - գիծը հեղինակի հետադաս խոսքից հետո:

4. **Զանազանել** այն նախադասությունները, որոնցում հեղինակի խոսքը միջադաս է:

5. **Նշանակել** չակերտները չհնչող ուղղակի խոսքի դեպքում:

**Դաս 48. Ներգործական և կրավորական կառույցներ** [Թեմատիկ պլանավորում]

***Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար***

1. Քանի՞ սեռ ունի բայը հայերենում:
2. Բայի ո՞ր սեռն է ուղիղ խնդիր պահանջում:
3. Ո՞ր ածանցի միջոցով են կազմվում կրավորական սեռի բայերը:
4. Բայի ո՞ր սեռն է, որ չի պահանջում ո՛չ ուղիղ և ո՛չ էլ ներգործող անուղղակի խնդիր:
5. Բայի ո՞ր երկու սեռերի միջոցով է հնարավոր շարահյուսական հոմանիշներ ձևավորել:

***Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա***

1. Բայի երեք սեռերի անվանումները:
2. Ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելու իրողությունը:
3. Կրավորական սեռի բայերի կազմությունը:
4. Չեզոք սեռի բայերի առանձնահատկությունը:
5. Ներգործական և կրավորական կառույցների՝ իրար փոխարինելու հնարավորության մասին:

***Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա***

1. **Անվանել** բայի երեք սեռերը:
2. ***Հիշել*** ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելը:
3. Տրված բայերի մեջ **ընդգծել** կրավորական ձևերը:
4. **Տարբերակել** չեզոք սեռի բայերը:
5. Տրված նախադասությունների մեջ **խմբավորել** ներգործական և կրավորական կառույցները:

**Դաս 49. Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցական նպատակի, նրանց հնչերանգը և կետադրությունը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ըստ հաղորդակցման նպատակի՝ նախադասությունները քանի՞ տեսակի են բաժանվում:
2. Ո՞րն է պատմողական նախադասության նպատակը:
3. Գրավոր խոսքում հարցական նախադասության հնչերանգն ի՞նչ կետադրական նշանի միջոցով է արտահայտվում:
4. Ո՞րն է բացականչական նախադասության հաղորդակցական նպատակը:
5. Ո՞րն է հրամայական նախադասության հաղորդակցական նպատակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության նպատակի և խոսողի վերաբերմունքի:
2. Պատմողական նախադասության նպատակը:
3. Հարցական նախադասության առանձնահատկությունը:
4. Բացականչական նախադասության հաղորդակցական նպատակը:
5. Հրամայական նախադասության հաղորդակցական նպատակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Անվանել** նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության նպատակի և խոսողի վերաբերմունքի:

2. **Նկարագրել** պատմողական նախադասության նպատակը:

3. **Հիշել** հարցական նախադասության կետադրությունը գրավոր խոսքում:

4. **Նկարագրել** բացականչական նախադասության նպատակը:

5. Տրված նախադասությունների մեջ **առանձնացնել** հրամայական նախադասությունները:

Դաս 50. Կետադրություն    [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

5. Ի՞նչ նպատակի են ծառայում կետադրական նշանները:
6. Կետադրական ի՞նչ նշաններ գիտեք:
7. Քանի՞ խմբի են բաժանվում հայերենի կետադրական նշանները:
8. Ի՞նչ դեր է խաղում հեղինակի վերաբերմունքը կետադրելիս:
9. Կետադրական ո՞ր նշաններն են ավելի հաճախ հանդիպում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Կետադրական նշանների՝ հնչերանգային տարբեր հատկանիշներ արտահայտելու նշանակությունը:
2. Կետադրական մի շարք նշանների անվանումները:
3. Կետադրական նշանների խմբերը:
4. Հեղինակի վերաբերմունքի դերը կետադրելիս:
5. Կետադրական հաճախ հանդիպող նշաններ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

4. **Ընթերցել** տրված նախադասությունը ճիշտ առոգանությամբ:
5. **Թվարկել** կետադրական մի շարք նշաններ:
6. **Անվանել** կետադրական նշանների խմբերը:
7. **Բացատրել** հեղինակի վերաբերմունքի դերը կետադրելիս:
8. **Թվարկել** կետադրական հաճախ հանդիպող նշանները:

**Դաս 51. Տրոհության նշաններ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Նախադասության մեջ ե՞րբ է դրվում վերջակետը:
2. Համարակալում արտահայտող տառերից և թվանշաններից հետո կետադրական ո՞ր նշանն է գործածվում:
3. Ե՞րբ է ստորակետ դրվում «և», «կամ» շաղկապներից առաջ:
4. Բութը առոգանությա՞ն, թե՞ տրոհության նշան է:
   *Թվարկի՛ր նպատակներդ՝ օգտվելով միջակետերից:*
5. Ստորակետ կարելի՞ է դնել բարդ նախադասության երկու պարզ նախադասությունների միջև:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վերջակետի տեղը նախադասության մեջ:
2. Համարակալում արտահայտող տառերից և թվանշաններից հետո դրվող կետադրական նշանը:
3. Ստորակետի գործածության պայմանները «և» շաղկապից առաջ:
4. Բութի՝ տրոհության նշան լինելը:
5. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների՝ ստորակետով անջատվելու հնարավորությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Նշանակել** վերջակետերը տրված տեքստում:

2. Համարակալում արտահայտող տառերից և թվանշաններից հետո միջակետ **դնել:**
3. **Նշանակել** ստորակետը բարդ նախադասության մեջ, եթե դրա բաղադրիչ նախադասությունները տարբեր ենթականեր ունեն, կապակցված են «և», «կամ» շաղկապներով:
4. **Բացատրել** բութի՝ տրոհության նշան լինելը**:**
5. **Նշանակել** ստորակետը բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասությունների միջև «որ», «բայց», «իսկ» շաղկապներով, «որ» հարաբերական դերանվամբ կապակցված լինելու դեպքում:

**Դաս 52. Առոգանության նշաններ** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որո՞նք են առոգանության նշանները:
2. Նախադասության մեջ ինչպե՞ս ենք կետադրում զգացմունք արտահայտող բառերը:
3. Առոգանության ո՞ր նշանն է կիրառվում կոչականի դեպքում:
4. Բաղաձայն հնչյունները կարո՞ղ են շեշտակիր լինել:
5. Բառավերջում ո՞ր ձայնավորը չի կարող առոգանության նշան կրել:
   *Ներկայացրե՛ք, թե ինչպիսին են հարցական նշանները քո ուսումնասիրած լեզուներում:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Առոգանության նշանները:
2. Բացականչական նշանի գործածությունը:
3. Շեշտի գործածությունը կոչականի դեպքում:
4. Բաղաձայն հնչյունների շեշտակիր չլինելը:
5. Ը ձայնավորի շեշտակիր չլինելը բառավերջում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. **Թվարկել** առոգանության նշանները:
2. **Նշանակել** բացականչական նշանը տրված նախադասության ձայնարկությունների վրա:
3. **Նշանակել** շեշտը կոչականի վրա:

4. **Ցույց տալ** շեշտի տեղը բառի մեջ:
5. **Նշանակել** շեշտը ը ձայնավորով վերջացող բառերում:

Դաս 53. Բացահայտության նշաններ [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որո՞նք են բացահայտության նշանները:
2. Կետադրական ո՞ր նշանն է օգտագործվում կրկնավոր բարդություններ կազմելիս:
3. Ստեղծագործությունների, կազմակերպությունների, պարգևների անունները գրելիս բացահայտության ո՞ր նշանն ենք կիրառում:
4. Նախադասության մեջ լրացուցիչ տեղեկություն հայտնելիս բացահայտության ո՞ր նշանն ենք դնում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բացահայտության նշանները:
2. Միության գծիկի դերը կրկնավոր բարդություններ կազմելիս:
3. Չակերտների գործածությունը ստեղծագործությունների, կազմակերպությունների, պարգևների անունները գրելիս:
4. Փակագծերի գործածությունը լրացուցիչ տեղեկություն հայտնելիս:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. **Թվարկել** բացահայտության նշանները:
2. **Դնել** միության գծիկը կրկնավոր բարդություններում:
3. Չակերտների մեջ **առնել** ստեղծագործությունների, կազմակերպությունների, պարգևների անունները:
4. **Առանձնացնել** նախադասության այն հատվածը, որը լրացուցիչ տեղեկություն է հաղորդում և **տեղադրել** փակագծերը:

## Դաս 54. Ոճագիտություն: Գիտական ոճի առանձնահատկությունները

Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր ոլորտներում է կիրառվում գիտական խոսքը:
2. Գիտական ոճը առավելապես գրավո՞ր, թե՞ բանավոր խոսքում է հանդես գալիս:
3. Գիտական շարադրանքում մենիմա՞ստ, թե՞ բազմիմաստ բառերի ենք ավելի հաճախ հանդիպում:
4. Նշե՛ք՝ որ ոճն է կիրառվում դասագրքերում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գիտական խոսքի կիրառության հիմնական ոլորտները:
2. Գիտական խոսքի՝ առավելապես գրավոր ձևով հանդես գալը:
3. Մենիմաստ բառերի գերակշռությունը գիտական խոսքում:
4. Գիտական ոճը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Թվարկել** գիտական խոսքի կիրառության հիմնական ոլորտները:
2. **Ներկայացնել** գիտական խոսքի՝ առավելապես գրավոր ձևով հանդես գալու պատճառը:
3. **Բացատրել** մենիմաստ բառերի՝ գիտական խոսքում գերակշռություն ունենալու պատճառները:
4. **Անվանել** դասագրքերի ոճը:

**Դաս 55. Գիտական ոճի բառապաշարը** [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպե՞ս ենք անվանում մասնագիտական բառերը։

*Մասնագիտական մի քանի բառ նշե՛ք:*

*Տրված շարքից առանձնացրե՛ք մենիմաստ բառերը:*

*ատոմ, ես, գոյական, թոքեր, աղաթթու, հաց, երես, պոեմ, ծանր*

2. Տերմինը կարո՞ղ է ունենալ փոխաբերական իմաստ։

3. Գիտական ոճում կարո՞ղ են նորակազմություններ կիրառվել:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Մասնագիտական բառերի անվանումը:

2. Տերմինի՝ փոխաբերական իմաստ չունենալը:

3. Նորակազմությունների կիրառության հնարավորությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել մասնագիտական բառերի անվանումը:

2. Բացատրել տերմինի՝ փոխաբերական իմաստ չունենալու պատճառը:

3. Ներկայացնել նորակազմությունների կիրառության պատճառները:

**Դաս 56. Գիտական ոճի քերականական առանձնահատկությունները**

[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր խոսքի մասերն են ավելի հաճախ կիրառվում գիտական ոճի շարադրանքներում:

2. Դերանունների ո՞ր տեսակներն են առավել հաճախ կիրառվում գիտական ոճում:

3. Ձայնարկություններ կարո՞ղ են կիրառվել գիտական ոճում:

4. Գիտական ոճում պա՞րզ, թե՞ բարդ նախադասություններն են գերակշռում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1.Գիտական ոճում լայն կիրառություն ունեցող խոսքի մասերը:

2.Հարցահարաբերական և ցուցական դերանունների գերակշռությունը գիտական խոսքում:

3.Ձայնարկությունների բացակայությունը գիտական խոսքում:

4.Բարդ նախադասությունների գերակշռությունը գիտական ոճում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.Թվարկել գիտական խոսքում հաճախ հանդիպող խոսքի մասերը:

2.Տարբերել դերանվան՝ գիտական խոսքում լայն գործածություն ունեցող տեսակները:

3. Բացատրել ձայնարկությունների՝ գիտական խոսքում չկիրառվելը:

4. Ներկայացնել բարդ նախադասությունների ավելի հաճախ գործածվելու պատճառները գիտական խոսքում: